

Սակայն Դարանաղցին հեռացնելով չի կրնար Գրիգոր վրդ. Կեսարացին անվրդոժ մնալ իր աթոռին վրայ, վասնզի քիչ յետոյ Յովհաննէս Խուլ կը գրաւէ պատրիարքական աթոռը, հաւանօրէն Կ. Պոլսեցի վեֆիլնեբը իր կողմը շահելով:

Գրիգոր վրդ. Կեսարացի «խստալ ժամանակս ինչ» պատրիարք, ըստ Յակոբ քահանայի, «ՌԾԸ (= 1609) քուիև» կը թողու իբր թէ իր պաշտօնը, մինչ իրականին մէջ կը ստիպուի թողուլ զայն:

Մինչև այդ թուականը պատրիարքական աթոռին վրայ ըլլալը կը հաստատուի Աւետարանի մը յիշատակարանէն, ուր ըսուած է. «Իրեցաւ Ս. Առեսարաւնս քվիև ՌԾԸ (= 1609) ի մայրաքաղաքն Ըսսանկոյ ի դուն Կօւերուկու Աք. Նիկողայոսի, առաջնորդութեանն Կեսարացի Գրիգոր քաջ րաքունապետին, քաղաքորութեան Սուրբան Անմեհիև, ձեռամբ անարժան Թոխացի Միխայելին (1) ի վայելումն Խաակացի Տ. Միխայելին:» (ԲՆՆՆՆՆՆ, թիւ 2946):

Հ. Ներսէս վրդ. Ակինեան (ՀԱ. 1933, էջ 167) անոր պաշտօնավարութիւնը կ'երկարածդէ մինչև 1610ի գարունը, սակայն

(1) Ծանօթ գրիչ մը՝ որ ուրիշ ձեռագիրներ ալ ընդօրինակած է Կ. Պոլիս նոյն թուականներուն: